*Կ-361⁵-23.08.2022-ՊԻ-011/0*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասում 1.12 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին ենթակետով.

| | | |
|---|---|---|
| | 6.1) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնումը գրանցելու համար | բազային տուրքի 5-ապատիկի չափով |

**Հոդված 2.** Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 16-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

| | |
|---|---|
| 16) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի հավատարմագրային կառավարման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով: |

**Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից: